# ԾԱՆՈՒՑՈՒՄ

Շատ գրագէտներ՝ «Բազմավէպ»ի աշխատակցելու փափաք կը յայտնեն, և կ'ուզեն իմանալ թէ ի՞նչ են մեր վարձատրութեան պայմանները։ Խմբագրութիւնս շնորհակալութիւն յայտնելով այդ ամէն փափաքողաց, կ'իմացընէ որ ներկայ խմբագրութեան օրով, «Բազմավէպ»ը պիտի պատրաստուի մի՛ միայն ներքին ուժերով. «Գեղունի»ն միայն կ'ընդունի արտաքին գրագիտաց աշխատակցութիւնը. և ի վարձատրութիւն՝ կը յղենք մի միայն այդ թերթը իբրեւ նուէր։

ԽՄԲ. ԲԱԶՄ.

## ՆԱՄԱԿԱՆԻ

ՏՓՂԻՍ. — Վ. Հ. Գ. Վ. ՆՊԵՏ. — Հաճելի են Ձեր նամակի բովանդակածներն. խորին յարգանք և շնորհակալութիւններ Վեհապետի գրութեան և գեղեցիկ լուսանկարին համար։

ՓԱՐԻԶ. — «ԲԱՆԱՍԷՐ». — Ընդունեցանք. ցանկալի է հետաքրքրական ըլլալն։

ԱԼԷՃԿԻՑ. — Պ. ՊԵՏՐ. ՋԱՔԱՐ. — Ցղած ենք փափաքելի գրութիւնն. շնորհակալութեամբ ստացած ենք թղթակցութիւններն։ Ընդունեցանք դրամը. յանձնարարութեան կը սպասենք. Նուէրը նուէր կը մնայ։

ՏՐԱՊԻԶՈՆ. — ՄԻԾՊՏԻԻ ՏԷՐ Խ. ՄԻՆԱՍ. — Յանձնեցինք և պատասխանը տպարանի տեսչութեան միջոցով Ձեզ յղեցինք։

ՇՈՒԼԱՎԷՐ. — Պ. Գ. ԲԱԼԱՍ. — Գնահատելի է Ձեր ջանքը. նկատողութեան կրնայ առնուիլ տպարանիս տեսչութեան վերջին գրութիւնը։ Շատերը տակաւին «Որբունի»էն կը խնդրեն, և մենք շատ անգամ նամակով և հրապարակաւ յայտներ ենք որ սպառած է այդ թերթը։

ՓԱՐԻԶ. — Պ. ՄԻՆԱՍ Զ. — Կը ստանաք ընկալագիրը. շնորհակալութիւն։

ԹԷՈԴՈՍԻԱ. — Վ. Հ. Հ. Վ. ՍԱՓԱՐ. — Բաժանորդաց և քարտին համար շնորհակալութիւններ։

ԻԱԼԿԱԹԱՅ. — ՄԵԾ. ՄԵՍՐ. Յ. ՍԷԹ. — Անպաճոյճ, սակայն առ Նահապետն կը խնկէր սրտէ ծխած սիրոյ և երախտագիտութեան խունկ, որով արժանի շնորհակալութեանց։ Հետաքրքրական են բովանդակութիւնք ծրարիդ։ Յիշատակեալ յիշատակարանի համար չենք կարող որոշ պատասխան մը տալ։

ՏՐԱՊԻԶ. — Պ. Զ. Մ. ՍԱՆԴԻԿԵԱՆ. — Շնորհակալութիւն, գանձեր ենք. դիմեցէք մեր վարժարանը։

ԲԱԳՈՒ. — Պ. ՏՐԴ. ՎԱՐԴԱՆ. — Կը կատարենք ու կը գանձենք. շնորհակալութիւն։

ՏՈՊՐԻԶ. — Պ. Ռ. ԳՈՒՅՈՒՄՃ. — Կը ստանաք թերթերը. բաժնեգնոյն լրման համար կրնաք յղել 4 ֆրանք եւս։

ԲԱԳՈՒ. — Պ. Գ. Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍ. — «Գեղունի»ի տարածման համար անխոնջ է Ձեր աշխատանքը, որով արժանի մեր խորին շնորհակալութեանց. գանձեցինք դրամն։ Գրական խնդիրը, յարգելով՝ նկատողութեան առած ենք։

ՏՐԱՊԻԶ. — ՄԵԾ. Տ. Մ. Վ. ԱՄԲ. — Մեր մէջ հեղինակը հեղինակ է և գրավաճառութեան հետ առնչութիւն չունի։

ԵԱՀՆԱԶԱՐ. — ՄԵԾ. ՏԷՐ Ս. Վ. ԽԱԶԸՃԵԱՆ. — Ի վաղուց Ձեր խնդիրը նկատողութեան առնուած ըլլալով, կատարած ենք արդէն ինչ որ խնդրած էիք։ Կը ստանաք Յունիս պրակն ալ։ Օ՜ն գալով, ոչ փափկանկատողութիւններ՝ այլ ամբակածող բառեր ու քարեր էին. և պէտք էր այսպէս...

ՌՈՒՍՏՐ ՄԱՍ. — Պ. Յ. Տ. ՂԱԶԱՐԵԱՆ. — Շնորհակալութեամբ գանձեցինք և ստացանք լուսանկարներն. Պ. Մաթէոսեանի «Գեղունի»ն Ձեր հասցէին կը յղենք։ Պահանջեալ պրակներն լոյս չեն տեսած, անոնց տեղ հրատարակուած է «Մխիթար բացառիկ Բազմավէպ»ը զոր ստացած էք արդէն։

ՂԱԹԸՐԹԱՌԻ ՄԱՍ. — Պ. ՄԱՆՈՒԿ ԳԱԼՍՏԵԱՆ. — Շնորհակալութիւն Ձեր աջակցութեան. կը ստանաք Պ. Կիւրղոեանի հասցէն։

ՓՐՕՎԻՏԷՆՍ. — Պ. Ն. ԽԱՇՄԱՆԵԱՆ. — Ձերինը յղած ենք, իսկ բաժանորդինը յղեցինք։

Կ. ՊՈԼԻՍ. — Պ. Գ. ՃԵՐՄԱԿ. — Ստացանք Տպարանի տեսչութենէն։

ԼՈՒԿԱՆՍԿ. — Պ. Յ. ՄԱՄՈՒԼԵԱՆՑ. — «Գեղունի»ն ժամանակին յղած ենք. գանձեցինք բաժնեգինը։

ՆԻՒ-ԵՕՐՔ. — Պ. Ն. ՏԻԼՅԱՐԵԱՆ. — Յանձնարարեալ ծրարով կրնաք տոլար յղել։

ՏՓՂԻՍ. — ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌ. — Երկու բաժանորդաց՝ ժամանակին թերթերը արդէն յղած ենք։

ՏՐԱՊԻԶ. — ՄԵԾ. ԿՈՄ. ԷՖԷՆՏ. — Գանձեցինք. պատկերներուն գինը ամբողջովին յանձնեցինք։ Խնդրածնիդ կը ստանաք։

Կ. ՊՈԼԻՍ. — ՄԵԾ. ՏԻՐԱՑՐ. — Ոչ Սիս՝ այլ Արմաշ։ Կը ստանաք։ Գգուելի են Ձեր գաղափարները։

Կ. ՊՈԼԻՍ. — Պ. Յ. ԱԼ. ԷՖ. — Ստացանք շնորհակալութեամբ։ Սկսանք տպագրութիւնը, որ կը կրէ հեղինակին անունը։

ՌՈՍՏՈՎ. — Պ. Մ. ԹԻՄԻՆՃ. — Այո՛ շատ ցաւալի ու ցաւագար է, բայց մամուլը պէտք է աշխատի քաջ վիրաբոյժ մ'ըլլալու։ Ձեր և Ազնիւ բարեկամ Պ. Պալեանի անսպառ աջակցութեանց խորին շնորհակալութիւններ։ Առանձին նամակ եւս կը փութանք յղելու։

ՄԵՐ ՀԱՍՑԷՆ Է RÉDACTION DE LA REVUE "*PAZMAVEB*"
St. LAZARE VENISE (ITALIE)

digitised by A.R.A.R.@